ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

№ 09

«07» հունվարի 2026 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի,
Շահումյան փողոց 2
☎ (060) 74 34 01
Էլ. փոստ՝ info@martuni.am

«Գլոբզոն Էներգիայիս» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Գալստյանին
Հասցե՝ ք. Երևան, Լեռ Կամսարի փ. 30/3 շենք, բն.3

«Էնկի» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Մանանյանին
Հասցե՝ ք. Դիլիջան, Անդրանիկի 3-րդ նրբ. թիվ 21

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Մարտունու համայնքապետարանը», ի դեմս Համայնքի ղեկավար Հ. Հովեյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի հիման վրա /այսուհետև Պատվիրատու/, մի կողմից, և «Գլոբզոն Էներգիայիս» ՍՊԸ և «Էնկի» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս տնօրեններ՝ Ա. Գալստյանի և Ն. Մանանյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների հիման վրա /այսուհետև՝ Կապալառու/, մյուս կողմից, 30/06/2025թ-ին կնքել են «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1», «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» և «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» ծածկագրով պայմանագրերը , որի համաձայն Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրերով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրերի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Վերոնշյալ պայմանագրերի 8.16 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

09.12.2025թ.-ին Մարտունու համայնքապետարանի կողմից «Գլոբզոն Էնթերփրայսիս» ՍՊԸ-ի՝ globezone.enterprises@mail.ru և globezone.enterprises@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվել է ծանուցում այն մասին, որ «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1», «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» և «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» ծածկագրերով պայմանագրերի կատարման համար համայնքի մասնաբաժնով հատկացվել է ֆինանսական միջոցներ և առաջարկվել՝ կնքել ծանուցմանը կից համաձայնագրերը և 15 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին ներկայացնել Մարտունու համայնքապետարան: Համաձայնագրերի ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու վերջնաժամկետը լրանում էր 30.12.2025թ.-ին, սակայն «Գլոբզոն Էնթերփրայսիս» ՍՊԸ-ի կողմից մինչև ժամկետի ավարտը Մարտունու համայնքապետարան չեն ներկայացվել վերոնշյալ համաձայնագրերը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Առաջնորդվելով ՀՀ օրենսդրության պահանջներով, և հաշվի առնելով կնքված պայմանագրերի 8.11, 8.16-կետերը, Մարտունու համայնքի ղեկավարը միակողմանի հրաժարվում է կապալային աշխատանքների կատարման «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1», «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» և «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» ծածկագրերով պայմանագրերից, համապատասխանաբար համարելով դրանք լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացույցային օր՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները (համապատասխանաբար 50%-ի չափով) փոխանցելու Պատվիրատուի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900145001484 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Շահումյան 2 հասցեով՝ սահմանված ժամկետում:

Սահմանված ժամկետում գումարները չվճարվելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ Գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «Գլոբզոն Էնթերփրայսիս» ՍՊԸ-ի և «Էնկի» ՍՊԸ -ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմնին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և /կամ/ որոկավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

Կատարող՝ Կարեն Սիմոնյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. +37494263449